ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 15 » « փետրվարի » 2019թ.**
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Այդինյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հ.Հովհաննիսյան

Է.Միերյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Զոհրաբյան

1. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Մ.Այդինյան)

1.1. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019 թվականի փետրվարի 15-ին, ժամը 10:00-ին, բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3 շ., 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի փետրվարի 11-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետով սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Առեա Պապիրուս» ՍՊ, «Սմարթլայն» ՍՊ, «Նորմա-պլյուս» ՍՊ, «Տիգվակո» ՍՊ ընկերությունների և Ա/Ձ «Վահե Երիջանյան»-ի հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

3. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Այդինյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ իրենց կողմից հաստատված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ սահմանված ժամկետում ներկայացվել է համակարգի միջոցով:

3.1.1 «Առեա Պապիրուս» ՍՊ, «Սմարթլայն» ՍՊ, «Տիգվակո» ՍՊ ընկերությունների ներկայացված տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին,

3.1.2 «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի չափաբաժին 47-ով ներկայացված տեխնիկական բնութագրում հստակ ներկայացված չէ մատակարարվող ապրանքի ծավալը և երաշխիքը:

Ա/Ձ «Վահե Երիջանյան»-ի չափաբաժիններ 43-ով և 44-ով ներկայացված տեխնիկական բնութագրում հստակ ներկայացված չէ մատակարարվող ապրանքների լարումը և երաշխիքը:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Մ.Այդինյան)

4.1. Հանձնաժողովի քարտուղարին՝

4.1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետը համակարգի միջոցով ծանուցել «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին՝ չափաբաժին 47-ով և Ա/Ձ «Վահե Երիջանյան»-ին՝ չափաբաժիններ 43-ով և 44-ով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Մ.Այդինյան)

5.1. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2019 թվականի փետրվարի 18-ին ժամը 14:30-ին հասցեն՝ ք.Երևան, Կառավարության 3 շենք, 5-րդ հարկ, բնապահպանության նախարարություն, 514 սենյակ հասցեում:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ.Այդինյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ.Հովհաննիսյան

_____ Է.Միերյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Զոհրաբյան